



Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյան խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Мшакъ»,
Կամ Tiflis, Rédaction «Mschak»,
Տ Ե Լ Ե Ք Ե Ն № 253.

Խաղաղութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առն օրերէն).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են
խաղաղութիւնը բաց է առաւօտեան 10 կոպեկով.
Տ Ե Լ Ե Ք Ե Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՆՈՒԹԻՒՆ

Հնագիտական ուսումնասիրութիւններ. —
Ներքին ՏԵՍՈՒԹԻՒՆ. Օպերային ներկայա-
ցումները. Նամակ Գրողային. Ներքին լու-
րեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Ամե-
րիկային. Արտաքին լուրեր. — ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ.
Մանրանկար. — ՀԵՌԱԳԻՐՆԵՐ. — ՅԱՅՏԱՐԱ-
ՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱՆԱՄԱՐԱԿԱՆ. Արտաքին
ման եւ Գիտություն:

ՀԱՄԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ-
ՆԵՐ

Մեր յայտնեցինք «Մշակի» մէջ, որ
Թիֆլիսում բացվեց Հնագիտական մի ըն-
կերութիւն: Սա երրորդ անգամն է, որ
Հնագիտական ուսումնասիրութիւնների
համար սահմանվում է կազմակերպութիւն
մեր երկրում: Նախկին կազմակերպու-
թիւնները գործեցին մի քանի տարիներ
է յետոյ դադարեցրին իրանց գործունեու-
թիւնը, մինչև որ նորից ծագեց համա-
խորման կարեւորութիւնը Հնագիտական
հետազոտութիւնների կատարելու համար:
Նախկին անաջողութիւնները բնակա-
նաբար առաջ են մղում մի հարց, թէ
արդեօք Հնագիտական ուսումնասիրու-
թիւնները պահանջ են մեր երկրի հա-
մար և ինչպէս պէտք է կազմակերպել
գործը, որպէս զի նա դարձեալ քայքայ-
վելու վտանգին ենթարկված չը լինի:

Որ կողմանք Հնագիտական ուսումնասի-
րութիւնների պահանջ ունի — դա աներկ-
բայելի է: Մեր երկրներ, որ ունեցել է հա-
զարաւոր տարիների պատմական և կուլ-
տուրական կենսը, որ վաղուց կարիք է
զգացել արձանագրութիւնների միջոցով
պահպանելու իրականութիւնը իր գոյութեան
մասին, որ թողել է բազմապիսի շինու-
թիւններ, կերտուածքներ և գրաւոր ի-
շատակարաններ, որ պահպանել է բազ-
մապիսի արժեքներ իր ժողովրդին շատ հին
սովորութիւնների մնացորդներով, անկաս-
կած, ներկայացնում է առատ նիւթ հա-
մար:

Բ Ա Ն Ա Ս Ի Ր Ա Կ Ա Ն

ԱՐԱՍԹՈՒՄԱՆ ԵՒ ԿԻՍԼՈՎՈՂՍԿ

«Մշակի» № 223-ում խոստացայ քննել յար-
գելի բժ. Վ. Արծրունու անձնական կարծիք-
ները Արասթումանի մասին, որովք արտայայտ-
ված էին իր հաշուետուութեան մէջ՝ Կովկա-
սեան բժիշկների համագործակցութեան Ծառ
հասկանալի է թէ՛ այս քննութիւնը, եթէ հա-
սարակական բնակչութիւնն չունենար, եւ
պէտք է բնակչությանը բերանացի յայտնելով
բարեկամիւն իմ նկատողութիւնները եւ առա-
նձին հրապարակական քննութեան չենթարկէի
լրագրի միջոցով նրա հարեւանցի հաշուե-
տութիւնը, որ աւելի մի թուղթի տպագրու-
թիւն է, քան թէ հեղինակի լուրջ մշակված
մի գործ: Այդպիսի տպագրութիւններ չա-
պով հաղորդելիս՝ շատ անգամ պատահել է
նոյն իսկ ամենալուրջ հեղինակների կողմից
հրապարակին յանձնել երբեմն եւ արտա հայ-
եացը:

— Դիմենք գործին:
— «Մշակի» № 223-ում պ. բժ. Վ. Արծրու-
նին գրում է. «Վերապահ Արասթումանի նման
անդեր մեր լեռնայաւան Կովկասում այնքան շատ
են, որ դժուար է նրան ամենայնաբար հա-
մարել: Մեր կարծիքով, այս կուրորտը, այս-
պէս ասած, արուեստօրէն է այդ նշանա-
կութիւնը ստացել, շնորհիւ ի Տէր հանգուցեալ
Մեծ Իշխան Գեորգի Ալեքսանդրովիչի: Անտա-
րակոյն նա անկարող է մրցել օրէցօր ա-
նող Կիսլովոզսկի, Սեւ ծովի ծովագրի կուրորտ-
ների հետ եւ հաւանական է (??), որ վաղ թէ
աւելի կը դադարի հիւանդներ գրա-
նելը, որ եւ նկատվում է հէնց այժմ»:

գիտական ուսումնասիրութիւնների համար
և կարող է օգուտներ ունենալ լուրջ ու-
սումնասիրութիւններից: Պահանջը կայ. և
այդ կողմից Հնագիտական ընկերութեան
կազմվելը բնական է և համապատասխան
երկրի առանձնայատկութիւններին:

Սակայն որպէս զի ընկերութիւնը կա-
րողանայ յարատեւութիւն և աջողութիւն
ունենալ, անհրաժեշտ է, որ նրա կաղ-
մող անդամները լինեն իսկական հետա-
քընդորդներ, գիտական պահանջներ ու-
նեցող անձինք, որ նրանք կարողանան
գրաւել նոր ոյժեր և թարմացնել ընկե-
րութեան կազմը, որ նրանք ընդարձակեն
իրանց ուսումնասիրութիւնների ծաւալը
և կատարեն մի շարք այնպիսի ուսումնա-
սիրութիւններ, որոնք կարող են պարզել
երկրի հին պատմութեան և կուլտուրայի
պատկերը և լայն պիտել ներկայ ազգա-
բնակչութեան կենսի յայտնի առանձնա-
յատկութիւնների վրա: Այդ բոլորի հետ
պէտք է զուգընթաց առաջ գնայ լայն,
խորութիւններ չը դնող մի հայեացք
կովկասեան ազգութիւնների և նրանց
անցեալի վրա, ունենալով մի նպատակ —
ուսումնասիրել լուրջ և անաւառ կերպով
այն բոլորը, ինչ որ մնացել է մեր նա-
խորդ կենսից:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՕՊԵՐԱՅԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄՆԵՐԸ

Կիրակի, ամսին 21-ին, չը նայելով որ Թիֆ-
լիսում ներկայացումների թիւը հասել էր
առանձնական, Արքունական թատրոնում «Բո-
հեմա» օպերան գրաւել էր մեծ բազմութիւն:
Պուշկինի իտալացի կոմպոզիտորը այս րէա-
կական պիեսայի համար կարողացել է այնպիսի
համապատասխան մուգընկալ գրել, որի մէջ ա-
մեն աշուղութեամբ պարզ որոշվում են տիպե-
րը եւ երեւոյթները: Օրկեստրում մուգընկալ
նուագում է բնի վրա երգվածից բոլորովին
տարբեր եղանակներ, բայց այդ տարբերու-
ւել, որ եւ նկատվում է հէնց այժմ»:

Արասթումանին փոքր ի շատէ նման տեղեր,
այն, Կովկասում կը գտնվեն, բայց եւ չը գի-
տեմ նրա նման մի լեռնանովորտ (4273 ոտք
ծովի մակերեւոյթից բարձր), որ ունենայ իր
հիւսիսային եւ հարաւային ճիւղահովիտներ-
ով մօտ 20 վերստ երկարութիւն, չըլայապա-
ված մօտ 26 վերստ տարածութեամբ կուսա-
կան մայր ծառի անտառներով եւ որ իր ծո-
ցում պարունակէր՝ բացի հիւսիսի գետակնե-
րից, գետից, անթիւ օտանաղբիւրներից, նաեւ
հաշակաւոր ջրամուկներ, որոնք ապրիլի լինի
օրական 120,000 վերստ՝ երկրի խորքերից
բղիթող տաք ջրեր, (48° C.) և որոնք գործա-
գորութեան համար այնքան մեծածախս եւ հոյա-
կապ չինութիւններ կառուցած լինէին, ինչպէս
Արասթումանումն է: Հարկ չը կայ այստեղ եր-
կար կանգ առնելու Արասթումանի հանքա-
շարքը և օգուտ անելու նշանակութեան մասին, որ
եւ մի ժամանակ մանրամասն բացատրած եմ
կայսերական Կովկասեան բժշկական ժողովի
նիստերում *): Դանի որ այնտեղ պայտուցած
եւ արդէն թէ՛ ամբողջ լայնատարած Ռուսաս-
տանում, Արասթումանը միակ նշանաւոր
ակրատօտերմն է, թէ՛ ակրատօտերմերը
Եւրոպայում վերջին երկու տասնեակ տարիներ
ուսում աւելի մեծ նշանակութիւն են ստանում
եւ հազարներով առաւել յաճախողներ գրա-
ւում, քան թէ նախ հանքային բաղադրութեամբ
լրերը, օրինակ՝ հաշակաւոր Գաշաէյն, Տէպ-
լից-Շեօնաու, չվէյցարական Ռադաց եւ
Ֆրանսիական Էջօլէ բէն: Եւ այժման Իօ-
նիդացիի տեսութեան համեմատ այդ ջրերի
անկաւակածելը բուժիչ գորութիւնը հի թէ նը-
րանց քիմիական, այլ նրանց գերազանց ֆի-

*) «О дальнѣйшей судьбѣ Абастуманскихъ минер-
водъ и Абастумана». Отд. оттискъ изъ протоковъ зас.
И. К. М. О. 6. № 10, 1883.

թեան մէջ դուր լաւ է, երգի եւ նուագման
մի կապ, որ սաստիկ զորացնելով տպագրու-
թիւնը՝ ստիպում է ձեզ լսել նրան անընդհատ:
Պիեսան ներկայ կենքն է ներկայացնում,
հետեւապէս զիստօր դերերն էլ մեզ աւելի
ծանօթ են այս օպերայում, որ կատարում
էին՝ աղքատ աղջիկ Միմի դերը — Ինտարովա,
Բիզեդա — Բենէ-Բադինա, բանաստեղծ — Բո-
րիսենկո, նկարիչ — Մակովայով, երաժիշտ —
Սիբիրսկայով եւ դերասան — Գերասիմենկո:
Այս բոլոր դերերն էլ թէ առանձին վերցրած
են՝ անսամբլի մէջ պատասխանատու դե-
րեր են: Ինտարովա փորձված արտիստուհի է
եւ իր խաղով դերին ապրիւն է տիպական կեն-
դանութիւն եւ իբրեւ երգչուհի իր գեղեցիկ
չօլալով ամեն ինչ լաւ է երգում: Ինչ վերա-
բերում է ձայնին՝ արտօժելի են միմյան վե-
րաբերութիւնները: Բենէ-Բադինա իբ-
րեւ ձայնով եւ աչքով խաղով շատ լաւ
ներկայացրեց Բիզեդայի դերը: Բորիսենկո,
Մակովայով, Սիբիրսկայով եւ Գերասիմենկո
հիմալի էին իրանց դերերում: Խմբերը եւ
օրկեստրը լաւ տպագրութիւն թողին:

Երկուշաբթի, հոկտեմբերի 22-ին, ներկայաց-
րին «Паяцы» եւ «Риголетто» օպերաները:
Երկուսումն էլ խելագատակ կայ, որ մեծ դեր է
կատարում եւ երկուսումն էլ մարդասպանու-
թիւն: Բոլանով — Паяцы եւ Մակովայով — Со-
կիս լաւ էին, իսկ Բենէ-Բադինա կնոջ դե-
րում այնքան աջող չէր:

Բիզեդայի դերում Կամիլօնկի, կարելի է
ասել, անմիտ էր, բայց Գուշկինայի երգած
Ջիլդան ոչ այնքան աջող կարելի է համարել:
Այստեղանիստերը երկուսումն այս երկուսի
լինքն էր եւ, ըստ իրենց թուելի, համարակու-
թիւնը գոհ մնաց ներկայացումից:

Կարա-Մուրզա

ՆԱՄԱԿ ԳՐՈՋՆԱՅԻՆ

Հոկտեմբերի 14-ին
«Գերեզմանը միայն կարող է ուղղելը ա-
սացուածը սխալ չէր լինի. եթէ հայ հոգեւո-
րականի համար ապագա լինէր: Ինչ ուղղում է՝

գիշերական յատկութիւններովն է բացատրվում:
Նոյն իսկ Եւրոպայի ամենաբարձր ակրատօ-
տերմը Գաշաէյնը դեռ 300 ոտքով ցած է
Արասթումանից:

Մեր խաղը այստեղ բժ. Արծրունու հետ
Արասթումանի եւ Կիսլովոզսկի համեմա-
տութիւնն է միմյան կլիմայաբանա-
կան տեսակետից, իբրեւ բուժավայրեր թո-
ղախտաւորների համար:

Արդ իբրեւ կլիմայական բուժավայր՝ ըն-
կերակցի կարծիքով Արասթումանը արուես-
տօրէն է նշանակութիւն ստացել շնորհիւ հան-
գուցեալ Թաքաժառանգի: Այս միտքը շատ
մեծ հակասութիւն ունի իր մէջ, որը պար-
զելու համար բաւական է մտաբերել հետե-
ւալը: Հանգուցեալ Մեծ Իշխան Գեորգի Ա-
լեքսանդրովիչը նախ քան Արասթումանում
տեղաւորվելը՝ ծովային երկար ճանապարհոր-
դութիւն կատարած էր եւ շատ բժշկական
մեթոդներ փորձած, սակայն նրա թոքախտը
դրանցից չէր նուագում, այլ՝ սաստկանում,
ուստի որոշված էր լեռնային օդը փորձել: Դրա
համար, մանրամասն հետախուզութիւններից
յետոյ, ընտրեցին իբր բուժավայր Արասթու-
մանը: Ասենք թէ՛ սկզբում սխալ տեղեկու-
թիւններով այդ տեղը ընտրվել էր, չէ որ այնու-
հետեւ մօտ եօթը տարի Օգոստովանա Հան-
գուցեալը ապրեց Արասթումանում: Նրա մօտ
էին եւ նրան այցելեցին թէ Ռուսաստանի եւ
թէ Եւրոպայի ամենանշանաւոր բժշկագետ-
կլիմիցիստներ: Եթէ Արասթումանը ի բնէ
օժտված չը լինէր կլիմայի հրաշալի յատկու-
թիւններով, միթէ կարելի է մի րօպէ անգամ
մտածել, թէ այդքան գիտնական անձինք չը
պէտք է ընդդիմանային նրա այնտեղ բնակե-
լուն: Եւ ընդհակառակը, եթէ Կիսլովոզսկը ա-
ւելի գերազանց բուժավայր լինէր թոքախտա-
ւորների համար, ապա ինչի ոչ ոք չը մտա-

արէր, նա իր փնչով դարձած մուրացկանու-
թիւնից ձեռք չի քաշի (խաղա բացատրութիւն-
ների մասին չէ): Աստիճանի թեմի մի քանի
տեղերում, գլխաւորապէս Վլադիկավկազում,
քահանաները, իբրեւ արդիւնքի նոր աղբիւր,
գործ էին դնում հետեւեալ ստոր միջոցը.
յայտնի է, որ քահանաները հաղորդութեան
համար վարձ պահանջելու իրաւունք չունեն,
բայց մեր պատուելիները այդ չարիքի դէմ ճա-
րը դրան էին. ով որ հաղորդվում էր, քահա-
նան իսկոյն պատարագից յետոյ գնում էր հա-
ղորդութիւն տունը եւ «պահպանի» տանով նըշ-
խար տալիս եւ առանձնէին էլ ճարտաստած
վարձատրում էր նրան: Մեր թեմի առաջնորդ
Արխանգել արքեպիսկոպոսը, այդ տեղը երե-
ւոյթի մասին տեղեկութիւն ստանալով վերաց-
րեց այդ սովորութիւնը, կարգադրեցով, որ այ-
սուհեանե ոչ մի քահանայ իրաւունք չունենայ
առանց հրաւերի եւ խնդրելու հաղորդութիւն
տուն նշխար տանել վարձատրութիւն ստա-
նալու նպատակով: Եւ այդպիսով այդ տեղը
սովորութիւնը վերացաւ ամեն տեղ, բայց ոչ
Գրոզնայում, որովհետեւ տեղիս քահանայի հա-
մար, որի միակ մտածածնքն է, որքան կարե-
լի է, շատ եւ նորանոր արդիւնքի աղբիւրներ
գտնելը, ոչ առաջնորդական արգելքներ եւ ոչ
էլ այդ առիթով ժողովրդի բացայայտ որոտնջ
արտայայտելը ոչ մի նշանակութիւն չունեն:
Նա անարգել շարունակում է իր փնչով — ա-
մեն հաղորդութիւն տուն նշխար տանել ու
«պահպանի» տան, որպէս զի փող ստանայ:

Մենք այնքան չէինք մեղադրի Մուխոմ-
ցեան քահանային, եթէ նա նիւթականի կող-
մից նեղ դրութեան մէջ լինէր, բայց տարե-
կան 1600—2000 ռուբլի արդիւնք ստանալուց
յետոյ՝ դարձեալ այդպիսի միջոցների դիմել, —
այդ արդէն աններելի է: Պէտք է ասել, որ
քահանայի հովուութեան տակ գտնվում են
100-ից աւելի հայ ընտանիքներ (կէսից շատը
ունենոր) Գրոզնայի մէջ եւ 40—50 ընտանիք
էլ չըլակայեցում:

Թէ Գրոզնայում եւ թէ չըլակայեցում հայերը
ընդհանրապէս պարագայում են առեւտրով եւ
շատ քչերը արհեստներով: Գրոզնայ, իբրեւ
մեզ տեղափոխել այնտեղ հանգուցեալ Թաքա-
ժառանգին, որի առողջութիւնը վերականգնե-
լու համար ոչ մի երեւակայելի միջոց չէր
խնայվում: Առաջարկողներ եղան միայն Նից-
ցայի մօտերը, ուր գնաց, բայց կարճ ժա-
մանակ մնաց, որովհետեւ նորից բարձրացեց
հիւանդութիւնը. ուստի նրան վերադարձրին
դարձեալ Արասթուման, ուր քանի տարի դեռ
համեմատաբար լաւ ապրեց մինչև ամենին
յայտնի տրուտ պատահարը:

Պէտք է ասել, որ դեռ մինչև հանգուցեալ
Մեծ Իշխանի Արասթուման դալը արդէն յայտ-
նի էին թոքախտի դէպքեր, որ այդ բուժա-
վայրում առողջացել էին: Մի կողմ թողած
մասնաւոր դէպքերը՝ եւ կը յիշեմ այստեղ այն
թոքախտաւոր բժիշկներին, որոնք մի կամ
երկու տարի Արասթումանում ապրելով բոլո-
րովին փրկվել են իրանց առեւելի ախտից, ինչ-
պէս օրինակ բժիշկներ Օստրովսկի, Մարեցկի,
Լիւբեցկի, Տօպուրա, Նիկոլսկի, որանք բոլորը
կենդանի են եւ առողջ, իրանք կարող են
հաստատել ասածս: Անս արանք եւ արանք չը
յաններն են, որ Արասթումանի նշանակու-
թիւնը բարձրացրել են Մեծ Իշխանի այնտեղ
գալուց առաջ էլ, յետոյ էլ:

Մեզ գործնական բժիշկներին կը մնայ ժո-
ղովրդի առաջ պարզել ոչ այն թէ՛ այս ինչ
բուժավայրը պէտք է խափանվի, միւսը բարձ-
րանայ, այլ՝ քննելով նրանց տեղական եւ կլի-
մայական յատկութիւնները, հասկանալով նրանց
բոլորի նշանակութիւնը եւ թէ ինչ բարելա-
ւութիւններ պէտք է մտնել, որ մեր հայրենի
բուժատեղիները առաւել ծաղկեն:

Ուրեմն նախ համեմատենք Արասթումանի
եւ Կիսլովոզսկի կլիման: Առաջինը՝ ակրատ-
արժեքներն ինչպիսի բուժատեղի է, միւսը
նեւ բնակավայրն (3000 ոտք բարձր ծ. մ.),
Արասթումանը չըլայապալած է օգոնաբոյր

առաջ գնացող նոր քաղաք, որից օր հայերի թիւն էլ աւելանում է այստեղ, բայց տարաբնույթ տեղիս հայերը չափ քիչ են հետաքրքրվում հասարակական եւ եկեղեցական խնդիրներով եւ, իբրեւ համայնք, օչնչով իրանց գոյութիւնը զգացնել չեն տալիս. բաւականաւորապէս են միայն ընդհանուր արտունջ արտաբայելով դէպի ամեն մի հասարակական կամ եկեղեցական տեղ երեւոյթ, իսկ մտածել տեղ երեւոյթները վերացնելու, մտածել բարեօրոշման միջոցների մասին, այսինքն, խռովից դէպի գործ անցնել—պակասում է նրանց: Պատճառը պարզ է—դեկամբրոզ եւ առաջնորդող չը կայ, եղանակներ էլ իրանց հետեւ են պահում: Ներկայ իրողութեամբ, պ. Յ. Ազատեանց, որ մի հասակացող ու եռանդուն երիտասարդ է եւ վայելում է ընդհանուր համակրանքը եւ որը չափ օգտակար կարող էր լինել թէ համայնքի եւ թէ եկեղեցու համար, ցաւելով պէտք է առել, որ վերջերս իրան չափ հետեւ է պահում եւ ճանաչողական անհամակրելի վարմունքները պատճառ բերելով բոլորովին սառն է վերաբերվում իր պաշտօնին: Պ. Ազատեանի գործից ստույգիւ պատճառով, նրա ջանքերով եւ մասնաւոր նպատակներով չկազմակերպված քառամայն երգչիկ խումբն էլ արդէն քայքայվելու վրա է, իսկ եկեղեցին՝ մանողի վրա շատ անախորժ ապաւորութիւն է թողնում—մաքրութիւնը բոլորովին բացակայում է: Մենք խորհուրդ կը տալինք պ. Ազատեանին չը հեռանալ գործից, այլ գլուխ կանգնել երիտասարդութեան, որ տանի բանում պատրաստ է լսել նրան եւ աշակերտ, եւ ընդհանուր ուժերով միացած շարունակել այն գործունէութիւնը, որ սկսել էր եւ յոյս էր տալիս շարունակելու: Վատեանը եւ գործից փախչելը քաջութիւն չէ:

Անցորդ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒԻՆԻՐ

Կովկասեան ցուցահանդէսի վարչութիւնը իր վերջին նիստում որոշեց նորից սկսել այն ներկայացումները ցուցահանդէսի թատրոնում, որոնք դադարեցրած էին հոկտեմբերի 18-ից: Այս նպատակով վարչութիւնը նորից հրաւիրեց այդ բնի վրա խաղացող դերասաններին շարունակելու իրանց ներկայացումները մինչեւ նոյեմբերի 1-ը:

Բազուի նաւթարդիւնաբերողների համաժողովի եւ Նորէյի կարգադրութեամբ այն վճարը, որ ստացվում է Նորէյի պանօրաման այցելողներից եւ նաւթարդիւնաբերողների վիշկային վրա բարձրացողներից, ամբողջապէս յատկացվում է Թիֆլիսի այդպէսորձական ու-

սնատաներով, որոնք շատ մեծ ազդեցութիւն ունեն թղթախորհրդի ընդհանուր չընկալման վրա: Երբեք լինելով եւ նրա բոլոր բուսականութիւնը Վորոնցովի արւեստորէն անդժամ մի պարկն է: Արասթու-մանը պտոյտաձեւ ուղիւն է, պաշտպանված ուժեղ հողմերով, որոնց արասթութիւնը տարեկան միջին թւով հազար հասնում է 1,3 մետր մի վայրեկանում, իսկ Կիւրօլօզսկը—բաց լեռնակալքայ է 1,7 մ. հողմերի արագութեամբ: Տարեկան միջին թւերը հաշված, Արասթութեանը ունի պարզ օրեր—86, Կիւրօլօզսկը—84, ամպոտ օրեր՝ Արասթութեանը—89, Կիւրօլօզսկը—118, անձրեւային օրեր Արասթութեանը—84, Կիւրօլօզսկը—80: Սակայն Արասթութեանի գետինը զարմանալի ծորող յատկութիւն ունի, այնպէս որ անձրեւից 1—2 ժ. յետոյ գետինը չորանում է, իսկ Կիւրօլօզսկի գետինը խոնավութիւնը երկար պահում է: Երբեք տեղեւում, ինչպէս «Տօպօլ—ալլէի» մօտի տները բոլորը թաց եւ խոնավ են: Կիւրօլօզսկի գետերի շրջակայքը տեղի (մալեա-րիայի) բուն է, որից պէտք է զգուշանալ, ինչպէս այդ վայրված է Պետրիգորսկի հանքաբուժական ընկերութեանը զեկուցումով *), իսկ Արասթութեանը մալեարիայից բոլորովին ազատ է: Ձիւնը աւելի երկար է նստած Արասթութեանում, քան Կիւրօլօզսկում. սակայն օդը ձիւնապատ օրերում երկու տեղումն էլ առաւել հանդարտ է, առաւել ազատ է փողոց, առաւել մաքուր, ուրեմն եւ աւելի ժամանաւորած ազդեցութիւն ունի հիւանդ թղթերի վրա: ձմեռը արեգակի տակ օդի ջերմութիւնն էլ զարմանալի շատ է լինում: Արասթութեանում դեռ աւելի, քան Կիւրօլօզսկում Առաւօտները եւ գիշերները Արասթութեանում, իբր աւելի բարձր եւ հովտային տեղում, առաւել ցուրտ է լինում, քան Կիւրօլօզսկում, արեգակի մի

տուճարանի օգտին: Մինչեւ այժմ ուսումնա-րանի վարչութիւնը ստացել է այս աղբիւրից 2,300 ռուբլի:

Մեկ, հոկտեմբերի 23-ին, Թիֆլիսի քաղաքային խորհրդի նիստում կատարված ընտրութեան ժամանակ, ձայների մեծամասնութեամբ, ուպրավայի չորրորդ անգամ ընտրվեց ինժեներ Տիգրան Էնֆիաճեանց:

Իշխան Մեչչերսկի «Гражданин» լրագրի վերջին համարներից մէկում մի անվայել յօդուած էր տպել ուսումնադուհիների բարոյականութեան մասին: Այժմ, ինչպէս հաղորդում են Պետերբուրգի թերթերը, կանանց բարձրագոյն կուրսերի ուսանողուհիներից մէկի հայրը եւ մի բժիշկ, որի կինը աւտոբուս է իր ուսման ընթացքը նոյն կուրսերում, դատ են բացել իշխան Մեչչերսկու դէմ՝ մեղադրելով նրան զրպարտութեան մէջ:

«Взр.» լրագիրը հաղորդում է, թէ Աֆրիկայից Պետերբուրգ է հասել մի առաջաստաւոր նաւ, որ բերել է իր հետ հողի բնաւ արեւադարձային հազարավոր բոյսերի մշակութեան համար: Աֆրիկական հողի մի տօնը ծախվում է 7 ռուբլով:

Առաջիկայ դեկտեմբեր ամսի 7-ին Պետերբուրգում կը բացվի ոսկեայ եւ արծաթեայ իրերի, ինչպէս նաեւ ակնեղէնների եւ կաշուեղէնների միջնադային ցուցահանդէս: Արդէն Ֆրանսիան պաշտօնապէս յայտնել է, որ նա կը մասնակցէ այդ ցուցահանդէսին:

Մայրաքաղաքի լրագիրները հաղորդում են, որ այս ամբողջ ընթացքում ֆինանսների մի-նիստութիւնը կը հրաւիրէ Պետերբուրգում ծխախոտագործների համաժողով:

Երկրագործութեան եւ պետական կալուածների միւնիստրութեան գլխավոր անտեսութեան բաժանմունքի հաւաքած տեղեկութիւններով՝ ներկայ տարվայ ընթացքում բոլոր հասարակական բերքը Ռուսաստանում, ընդհա-նուր առմամբ, միջակից ստոր է Մասնաւորապէս Ռուսաստանի արեւելեան եւ հարաւարեւելեան նահանգներում բերքը անբաւարար է եւ մինչեւ անգամ վատ: Միայն հարաւարեւելեան նահանգներում բերքը լաւ է:

ՔԱՐԱՎԱՆՍԱՐԱՅԻՑ մեզ գրում են. «Մի ամսից աւելի է անձրեւ, ձիւն գալուց յետոյ,

փոքր ուշ ծագման եւ մայր մտնելու համեմատ: Այս թուուցիկ համեմատութեան մէջ, եթէ զիստաւոր բուժիչ գործօնները ի նկատի առնենք, դուրս կը գայ որ 1) Արասթութեանը կլիմայական տեսակէտից աւելի գերազանց պիտի հա-մարվի, քան Կիւրօլօզսկը, 2) երկու տեղն էլ կարող են թղթախոտերների համար օգտակաւ լինել: մէկը՝ իբր. ալ պէտք է կուրորտ, միւսը՝ իբր. ներքնալպեան կուրորտ, զիստա-րապէս՝ աշնանը եւ ձմեռը, երկրորդ տեղում՝ ամառը: իսկ գարունը ամենից սակաւ նպաստաւոր է իր փոփոխական, անձրեւային եւ քամակի հողմային օրերով. եւ այս առաւել Կիւր-լօլօզսկում, ուր ամառը սկսվում է, կարելի է ասել, յուլիսի 1-ից:

Այս կարեւոր նկատողութիւնից յետոյ դառ-նանք քաղաքի մեր համեմատութեան: Թղթախոտը բժշկելու համար բաւական չէ միմիայն կլիման, որքան էլ գերազանց լինի: Եւ, այլ կարեւոր են նաեւ համապատասխան օդերը, կենսական պայմաններ, ճանապարհի յարմարութիւններ: այս տեսակէտով արդարեւ Կիւր-լօլօզսկը առաւելութիւններ ունի. նախ եւ առաջ երկաթուղին, որ Կիւրօլօզսկը կապում է (ան-ցեղաւորութեան) ոչ միայն Ռուսաստանի քա-ղաքների հետ. հարուստ բազուկները օդա-փոխութեան համար փոխանակ երկար ճա-նապարհորդութիւնով Արասթութեան գալու-նը, ուղղակի երկաթուղով այժմ գնում են Ժելեզ-նօվօզսկ եւ Կիւրօլօզսկ, իբր առաւել զուար-ձուկեան տեղեր: Ընդհանրապէս, որոնք կարօտ են իսկապէս օդաբուժութեան, արանք դարձնալ Արասթութեան են գալիս: Ուստի յաճախորդների թիւը Արասթութե-անում պակաս չէր այս տարի, ինչպէս գրում է բժ. Արծրունին, այլ միմիայն նրանց տեսակը փոխվեց: Ինչ վերաբերում է անդի եւ կենսա-կան միւս պայմաններին, թէն Կիւրօլօզսկը դարձնալ մի քանի առաւելութիւններ ունի, բայց ոչ այն աստիճան, որ մարդ կարողանայ

հիմա եղանակը մի փոքր մեղմացել է: Ընդ-հատված հողեր հերկելը չը կարողացան չա-րունակել թէ սերմացու չունենալու եւ թէ ա-նասունների տաւաղ ընկնելու պատճառով: Շատ պարզ է, որ եկող տարվայ սովը անխուսա-փելի է: Հիմնականից արդէն գիւղացիք հաց են առնում: Ցորենի պուրը արժէ 1 ռ.—1 ռ. 10 Կ., իսկ ալիւրը 1 ռ. 25 Կ.—1 ռ. 30 Կ.:

ՔԱՐԱՎԱՆՍԱՐԱՅԻՑ մեզ գրում են. «Վեր-ջապէս մեր քաղաքում եկեղեցին, զգվելով ժողովրդի անտարբերութեանից, ճանաչանքի անհաշտ արարքներից, փուլ եկաւ, բարե-բախտաբար գիշերը, որով եւ մարդկային զոհեր չեղան»:

ՂՈՒԲԱՅԻՑ մեզ գրում են. «Ռուսները հայ-երի հետ պատրաստվում են մի ներկայացում տալու տեղական բարեգործական ընկերութեան օգտին: Մեղմունք մի չաքաթ է, հրաշալի գար-նային եղանակներ է անում, երկինքը պարզ է, գետինը չոր»:

ԲԱՐՈՒՄԻՑ մեզ գրում են. «Շատ արտա-շարժ լուրեր են պատմում այստեղ համառոտ նաւերը այն մի խումբ հայերի մասին, որոնք արանից մի ամիս առաջ հեռացել էին այստե-ղից հայրենիք վերադառնալու նպատակով: Այս մասին «Новое Обозр.» լրագրի այստեղի թղ-թակիցը համառոտ կերպով գրել էր նոյն թերթի 5846 համարում: Մենք ապաստմ էինք աւելի մանրամասն տեղեկութիւններ ի-մանալ եւ յետոյ գրել ձեզ: Ահա մեր իմացածը: Մի խումբ հայեր, թւով 25 հոգի, որոնք Տրա-պիզոնի կողմնորոշ յետոյ եկել էին Ռուսաս-տան աշխատանքի, կամենում են գնալ հայրե-նիք, բայց այդ բանը չէ աշղոյժում նրանց, եւ վերջը ստիպված են լինում դիմել մի առա-ջատեսական նաւապետին, որ նա ապահով տանէ իրանց հայրենիք, կանխապէս վճարե-լով 10-ական ռուբլի: Նաւապետը համաձայն-վում է եւ Բաթումից օրինաւոր կերպով հե-ռանում են: Մենք է մի կերպ մտնել Թիւր-քիս: Բաթումից դուրս գալուց յետոյ, եղանակը փոխվում է եւ ծովը սկսում է ալիւնովել, իսկ մինչ այդ՝ նաւը հասած է լինում Իրկա, որը Բաթումից 8 ժամվայ ճանապարհ է: Նաւա-պետը հրաւիրում է այստեղ իջնել եւ պահել անտառներում, մինչեւ ինքը գնայ, եւ յարմար ճանապարհ գտնելով շարունակեն ճանապարհը: Երբեք իջնում են, իսկ նաւապետը հեռանում է: Հայերը կապակծելով որ մի գու-ցէ նաւապետը գնաց իրանց մասնելու, սկը-սում են փախչել, բայց նաւապետը արգելում են: Հայերը նեղը ընկած լինելով՝ սկսում են

ասել, թէ Արասթութեանը պէտք է այստեղ ան-ոչնչանալ Կիւրօլօզսկի առաջ: Ապացոյց—դար-ձնալ Պետրիգորսկի հանքարդիւնութեան ըն-կերութեան վրը յիշած զեկուցումը. արմատմ պարզված է, որ Կիւրօլօզսկը իր այժմեան հան-դամանքներով դեռ չը պէտք է քարոզվի իբրեւ կլիմայաբուժական, մինչեւ որ չաղովի իրագործել Կիւրօլօզսկից մի քիչ դուրս «Красные Ванны» կոչված աւելի յար-մարաւոր տեղում կը ձգեն անդիների համար կաշն օւստուր օւստուր օրիս: Բայց մինչեւ այդ ժամանակ Արասթութեանում էլ կարող է հիմնվել այդ տեսակ սանատորիա: ԶԳ որ այդ զեկուցում Արասթութեանի նշանակութիւնը կըրկ-նակի կը բարձրանալ եւ առ դարձնալ կը շա-րունակէ մրցել Կիւրօլօզսկի հետ:

Ըստ իս, պէտք է ցանկալ, որ այդ մրցումը միշտ լինի, եւ՝ ոչ թէ նպատակ, որ մէկը կամ միւսը խափանվի: Ինչպէս որ Կովկասը կոչ-վում է Ռուսաստանի Եվրոպայի, պէտք է ցան-կալ, որ Արասթութեանն էլ լինի Կովկասի «Դա-վապալարը», քանի որ իրօք էլ իր կլիմայով վերջինիս համապատասխանում է, իբրեւ ալ-պեան մի կուրորտի տեղ: Սեւ ծովի ծովագրի տանտօրիաներն էլ թող լինեն մեր Riviere-ը: Յուշով եմ, թէ յարգելի ընկերակիցս, բժ. Վ. Արծրունին, բոլորովին համաձայն ինձ հետ, որ այդ երեք տեսակի (տեղագրութեան համե-մատ) բուժավայրերից իւրաքանչիւրը իր առ-նանքին նշանակութիւնն ունի այս կամ այն հի-ւանդի համար: Ցանկանք միմիայն ուրեմն, որ երեք տեսակն էլ մեր երկրում ունենանք բար-դաւած դրութիւնով: Ուստի այստեղ վերջաց-նում եմ եւ իմ ցննդատութիւնը:

Բժշկապետ Աւետիք Բաբայան

Թ. Գ. Այս յօդուածը, իբր շարունակութիւն իմ նախընթաց նամակի («Մշակի» № 223) եւ վերջացնել էի, երբ կարդացի բժ. Վ. Արծրու-նու նամակը («Մշակի» 229-ում): Այդ պատա-սանքի երեւալուն եւ շատ ուրախացայ, քանի

ատրճանակի հարուածներով փախչելու նաւա-տիւններն ու իրանք էլ փախչելու Այդ իսկ րո-պէին գալիս է նաւապետը մի խումբ օտա-կանների հետ, որոնք սկսում են ձերբակալել անգլէներին, իսկ ովքեր զենքեր ունէին՝ հա-կառակվում են, եւ երկու կողմից էլ վիրաւոր-վածներ եւ սպանվածներ են լինում: Զինուոր-ները ձերբակալում են մնացեալներին եւ տա-նում Ռիգայի բանառ: Առում են, որ կուր ժա-մանակ նաւապետը վիրաւորվել է: Առ այժմ այսպէս է խօսվում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՄԵՐԻԿԱՅԻՑ

Բոստօն, հոկտեմբերի 9-ին
Թէօդօր Բուզվար

Ամերիկայի նոր նախագահը, որ իր պաշտօ-նին գլուխ անցու քաղաքական ոճի մը հե-տեւանքով, ամենէն երիտասարդ նախագահն է Միացեալ-Նահանգաց պատմութեան մէջ: Թէօ-դօր Բուզվարը 45 տարեկան է, սակայն 20 տարեկան հանրային կեանքի փորձառութիւն ունի:

1880-ին ընթացաւարտած Հարվարտի հա-մալսարանէն՝ գրեթէ անմիջապէս անդամ ընտ-րուած է Նիւ-Եորքի նահանգային խորհրդա-րանին. անկից ի վեր շարունակվարած է այլ եւ այլ քաղաքական պաշտօններ, ինչպէս եւ մաս-նակցած ընտրական պայքարներուն: 1889-ին Ռոյէնկթըն կանչուեցաւ նախագահ Հարիսոնի օրով, իբրեւ անդամ քաղաքական պաշտօնեա-ներու ընտրութեան յանձնարարին: 1895—97 թ. Նիւ-Եորքի օտարկանութեան պետն էր, անկից վերջ նաւային գործոց նախարարի օգ-նական: Այդ վերջին պաշտօնէն հրաժարելով՝ սպանիական պատերազմին գնաց, իբրեւ հա-զարապետ իր կազմակերպած ձեւաւոր կամա-ւորներու զինքը մը: Պատերազմի միջոցին Սանթիակոյի քով իր գունդը փայլուն գոր-ծեր կատարեց եւ հազարապետը դափնինքով եւ զարձաւ՝ Նիւ-Եորքի նահանգին կառավա-րիչ ընտրուելու: Իր կուսակցութեան խնդ-րանքով Բուզվարը տարի մը վերջը հրաժարե-ցաւ վերընտրութեան թեկնածու ըլլալու: Եւ իբրեւ փոխ-նախագահի ընտրելի, նահանգաց մէկ ծայրէ միւսը գնաց հարիւրներով ճառեր կարդալու, կազմակերպելու եւ քուէ շահելու: Յայտնի է թէ հանրապարականներու յաղթա-նակին մէկ կարեւոր մասը փոխ-նախագահին ջանքերուն եւ ժողովրդականութեանը ար-դիւնքն էր:

Թէօդօր Բուզվարը միայն պաշտօնի մարդ չէ. նախագահը իր ուսանողութեան օրերէն գրե-

որ դրանով թիրիմացութիւնը կամ տարբե-րութիւնը մեր երկուսիս հայեացքների մէջ զիստաւոր կէտերում իսկապէս վերանում է:

1) Նա ապացուցանում է, որ հեղինակի ստեղծելու աւանական վերաբերմունքը ինքրին՝ հետեւանք էր զօկոտոր Գոպաձէի չափազանց զովեսաների (Արասթութեանի նկատմամբ): Դրա դէմ այժմանը կասեմ թէ՛ զեկուցանողի միա-կողմանիութիւնը լիովին չէ արդարացնում ճշմարտագոյն միակողմանիութիւնը: 2) Այդ նամակում աւելի պարզ դուրս է բերված հե-ղինակի սխալ ըմբռնումը իմ արտասանածի, իբր եւ ասած լինեմ, թէ ջրաբուժական մասը Արասթութեանում հնացած եւ անպէտք է լինի: Այդպէս բան եւ չէի կարող ասել, քանի որ ամենին յայտնի է թէ, Արասթութեանի բա-ղանիւնները եւ ամբողջ ջրաբուժարանը Ռու-սաստանում դեռ մինչեւ օրս էլ առաջնակարգ եւ օրինակելի հաստատութիւններ են: Իմ խօսքս ներքնայն կի տաւ-դու-չերի մասին էր, որի նեղումը գրութիւնը վաղուց հիւանդ-ների մեծամասնութեանը դժգոհութիւններ է պատճառում եւ պահանջներ պիտի բարձր ընդ-լայնումն, քանի որ միջոցներ դրա համար հա-ւաքած միւսն են արքունի զանձարանում: 3) Այդ նամակը հաստատում է, որ բժիշկների նկատողութիւնները չէին նշանակում, թէ Արասթութեանը լաւ կուրորտ չէ կարող լինել: Ահա հէնց այդ բանը եւ կամեցայ պարզել ա-ւելի ընդարձակօրէն այս իմ յօդուածով: Կը մնայ նորահայտութիւն յայտնել բարեկամի, որ իր նկատողութիւնով ինձ առիթ տուեց իմ ասածները բժշկական համաժողովում աւելի պարզելու (գրանով եւ մի երկու առողջապա-հական մտքեր տարածելու հայ ընթերցողների շրջաններում), ուստի այս վերջին երկողովք բոլորովին փակում եմ (գտնէ իմ կողմից) պօ-լեմիկը մեր մէջ այդ հարցի մասին:

*) Записки русского бальнеологического О-ва въ Пятигорскѣ, № 5—6 за 1898/9.

Ю торговлю. 8—10